# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հուլիսի 2025 **թվականի** N1316Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի N 1229-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Սավոյան փողոց № 11/2 հասցեում գտնվող 546.19 քառակուսի մետր արտաքին (480.26 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը 546.19 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Կարեն Արամայիսի Եղիազարյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1229-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:
Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Սավոյան փողոց № 11/2 հասցեում գտնվող 546.19 քառակուսի մետր արտաքին (480.26 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը 546.19 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Կարեն Արամայիսի Եղիազարյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1229-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման 1-ին կետում «442414 (չորս հարյուր քառասուներկու հազար չորս հարյուր տասնչորս)» թվերը և բառերը փոխարինել «1802427 (մեկ միլիոն ութ հարյուր երկու հազար չորս հարյուր քսանյոթ)» թվերով և բառերով:
2) Որոշման 2-րդ կետում «1802427 (մեկ միլիոն ութ հարյուր երկու հազար չորս հարյուր քսանյոթ)» թվերը և բառերը փոխարինել «442414 (չորս հարյուր քառասուներկու հազար չորս հարյուր տասնչորս)» թվերով և բառերով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Կ.ՄԱԼԽԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
# Շ Ի Ր Ա Կ Ի   Մ Ա Ր Զ
# Գ Յ Ո Ւ Մ Ր Ի   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հուլիսի 2025 **թվականի** N1315 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N 1971-Ա, ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 2525-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՄՈՒՇԵՂ ՀԱԲԵԹՆԱԿԻ (1/2 ՄԱՍ) ԵՎ ՅՈՒՐԻ ՀԱԲԵԹԻ (1/2 ՄԱՍ) ԲԱՍԵՆՑՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ԱՆՑՈՒՄ N 30 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 94.83 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 ԴՈՒՌՆ ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 2 ՊԱՏՈՒՀԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 29.56 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Մուշեղ Հաբեթնակի և Յուրի Հաբեթի Բասենցյաններին պատկանող (Հիմք՝ տեխնիկական անձնագիր № 177 Տրված 1987 թվականի փետրվարի 23-ին) Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոց 1-ին անցում N 30 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված են 94.83 (իննսունչորս ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ բացված է 1(մեկ) դուռ, ինքնակամ փակված է 2(երկու) պատուհան և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 29.56 (քսանինն ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունը կառուցված է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
Քաղաքացի Մուշեղ Բասենցյանի լիազորված անձ Արտյոմ Բարսեղյանը դիմել են Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:
Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետի դ) ենթակետի, Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Մուշեղ Բասենցյանի լիազորված անձ Արտյոմ Բարսեղյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 19-ին N 3146 թվագրմամբ)՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023WMTE8X ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացիներ Մուշեղ Հաբեթնակի (ծնված 1962 թվականի հունվարի 12-ին) և Յուրի Հաբեթի (ծնված 1952 թվականի փետրվարի 09-ին) Բասենցյանների սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոց 1-ին անցում N 30 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 29.56 (քսանինն ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա բնակելի շինության նկատմամբ:
2. Քաղաքացիներ Մուշեղ Հաբեթնակի և Յուրի Հաբեթի Բասենցյաններին պատկանող Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոց 1-ին անցում N 30 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 94.83 (իննսունչորս ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն, ինքնակամ բացված 1(մեկ) դուռն, ինքնակամ փակված 2(երկու) պատուհանն ճանաչել օրինական, որպես օրինականացման վճար տեղական բյուջե ենթակա է գանձման 8175(ութ հազար մեկ հարյուր յոթանասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Գյումրի համայնքի ղեկավարի <<Քաղաքացիներ Մուշեղ Հաբեթնակի (1/2 մաս) եվ Յուրի Հաբեթի (1/2 մաս) Բասենցյաններին պատկանող Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոց 1-ին անցում № 30 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 87.71 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն ինքնակամ բացված

1 դուռն ինքնակամ փակված 2 պատուհանն օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 29.56 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասի եվ դրա վրա կառուցված 8.1 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության կարգավիճակի մասին>> 2024 թվականի հուլիսի 1-ի N 1971-Ա, Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 1-ի № 1971-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 2025 թվականի օգոստոսի 30-ի N 2525-Ա որոշումները ճանաչել ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մուշեղ Բասենցյանի լիազորված անձ Արտյոմ Բարսեղյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«04» նոյեմբերի 2025 **թվականի** N 1314-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՄԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՏՐՈՍՈՎԻ ՓՈՂՈՑ N 2 ՀԱՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 141.64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 324.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Ռոմիկ Գևորգի Հովսեփյանին պատկանող (հիմք՝ ըստ տեխնիկական անձնագիր՝ N 6985 տրված 11.02.1989թ.) Գյումրի քաղաքի Մատրոսովի փողոց N 2 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 324.1 (երեք հարյուր քսանչորս ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված են 141.64(մեկ հարյուր քառասունմեկ ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինություններ:
Քաղաքացի Ռոմիկ Գևորգի Հովսեփյանի լիազորված անձ Արթուր Միհրանի Բագրատյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի նրա վրա առկա շինությունների և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 20232GZAFA ծածկագիրը և հաշվի առնելով քաղաքացի Ռոմիկ Գևորգի Հովսեփյանի լիազորված անձ Արթուր Միհրանի Բագրատյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի դեկտեմբերի 6-ին N 26173 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Ճանաչել քաղաքացի Ռոմիկ Գևորգի Հովսեփյանի (ծնված 1951 թվականի դեկտեմբերի 6-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Մատրոսովի փողոց N 2 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
2.Գյումրի քաղաքի Մատրոսովի փողոց N 2 հասցեին կից, սահմանված չափից ավել օգտագործվող 24.1 (քսանչորս ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 164699 (մեկ հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր իննսունինն) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Ռոմիկ Գևորգի Հովսեփյանին:

3.Քաղաքացի Ռոմիկ Գևորգի Հովսեփյանին պատկանող Գյումրի քաղաքի Մատրոսովի փողոց N 2 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 141.64(մեկ հարյուր քառասունմեկ ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռոմիկ Գևորգի Հովսեփյանի լիազորված անձ Արթուր Միհրանի Բագրատյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** 2025-02-04 16:13:11 GMT+4 Համայնքի ԷԿԵՆԳ-ի կողմից **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«04» հուլիսի 2025 **թվականի** N 1313-Ա

**<<ԳՐԱՎԻՏՈՆՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ 46 Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Գրավիտոնս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի հունիսի 26-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հունիսի 27-ին 8834-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Գրավիտոնս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 46 Ա հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լեդ էկրան) ընդհանուր 3 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հունիսի 26-ից մինչև 2026 թվականի հունիսի 26-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Գրավիտոնս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Ա. Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ mID Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«04» հուլիսի 2025 **թվականի** N 1312-Ա

**<<ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 7/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Կոնվերս Բանկ>> փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի հունիսի 18-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հունիսի 30-ին 8943-2025 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Կոնվերս Բանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 7/7 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) արտաքին գովազդի պաստառներ ընդհանուր 3,9 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հունիսի 18-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Կոնվերս Բանկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարիչ՝ Էդգար Թումասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հուլիսի 2025 **թվականի** N 1311-Ա

**<<ՆԱՎԱՎԱՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ 56 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Նավավան>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի հուլիսի 01-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հուլիսի 01-ին 9040-2025 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել << Նավավան >> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի Գորկու 56 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լեդ էկրան) ընդհանուր 5□6 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հուլիսի 01-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Նավավան>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Տիգրան Ալավերդյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հուլիսի 2025 **թվականի** N1310-Ա

**<<ՎԻԴԱ ԿԵՐԱՄԻԿԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ 181/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Վիդա կերամիկա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի հուլիսի 01-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հուլիսի 01-ին 9037-2025 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Վիդա կերամիկա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի Շիրակացու 181/3 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 5□8 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հուլիսի 01-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Վիդա կերամիկա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Արթուր Մանուչարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«04» հուլիսի 2025 **թվականի** N 1309-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱՅԱՆԵ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ 104 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գայանե Գալստյանի 2025 թվականի հունիսի 26-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հունիսի 27-ին 8870-2025 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գայանե Գալստյանին Գյումրի քաղաքի Գորկու 104 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հունիսի 26-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գայանե Գալստյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հուլիսի 2025 **թվականի** N 1308-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 1/5 , ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ 7/15 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գրիգոր Հովհաննիսյանի 2025 թվականի հունիսի 27-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հունիսի 27-ին 8865-2025 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գրիգոր Հովհաննիսյանին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա 1/5, Գարեգին Նժդեհ 7/15 հասցեներում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հուլիսի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գրիգոր Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հուլիսի 2025 **թվականի** N 1307-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ N 5/4 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ «ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց N 5/4 հասցեի անշարժ գույքը «Գյումրու Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման տրամադրելու մասին» N 45-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 14042021-08-0032) Ղանդիլյան փողոց N 5/4 հասցեի 3617,49 (երեք հազար վեց հարյուր տասնյոթ ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 0,834831 (զրո ամբողջ ութ հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր երեսունմեկ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը 10 (տասը) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Գյումրու Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը, ընկերության գործունեության կազմակերպման նպատակով:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել «Գյումրու Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գյումրու Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հ.Աղայանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-07-04 14:45:39 GMT+4
Հաստատված է ԷԿԵԼԱ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** mID **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«04» հուլիսի 2025 **թվականի** N 1306-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի N 428-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 5-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով քաղաքացի Մկրտիչ Օնիկի Պապիկյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2025 թվականի հունիսի 20-ին N 8446 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2016 թվականի մարտի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գոգոլի փողոցի հարևանությամբ գտնվող 143,79 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 533,71 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացիներ Մկրտիչ Պապիկյանի և Լուսիկ Տեր Ավագյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին» N 428-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մկրտիչ Օնիկի Պապիկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025.07.04 15:15:17 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 04 » նոյեմբ. 2025 **թվականի** N 1305-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԲՈՒՅՍԵՐՈՎ ԵՎ ԾԱՂԿԱՄԱՆՆԵՐՈՎ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման աշխատանքների և քաղաքացիների սպասարկման գրասենյակի բույսերով և ծաղկամաններով կահավորման աշխատանքների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման վերադաս՝ Հենրիկ Գասպարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հովհաննես Ղազարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետի օգնական,

գ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Վարդան Ղազարյան – Գյումրի համայնքապետարանի աշխատակազմի դենդրոլոգ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

09

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«04» հուլիսի 2025 թվականի N 1304-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԲՈՒՅՍԵՐՈՎ ԵՎ ԾԱՂԿԱՄԱՆՆԵՐՈՎ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման աշխատանքների և քաղաքացիների սպասարկման գրասենյակի բույսերով և ծաղկամաններով կահավորման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Սերգեյ Մուրադյան -Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի գլխավոր մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» նոյեմբեր 2025 **թվականի** N 1303Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Խ. ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ № 3/9 ՀԱՍՑԵԻ 145.75 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Խ. Կոշտոյան փողոց № 3/9 հասցեի 145.75 (մեկ հարյուր քառասունհինգ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողայինօրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Խ. Կոշտոյան փողոց № 3/9 հասցեի 145.75 (մեկ հարյուր քառասունհինգ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2025-11-03 13:17:34 GMT-4
miD

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«03» հուլիսի 2025 **թվականի** N 1302-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆՏԱՌԱՎԱՆԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ N 48/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի «Հողամաս նվիրատվություն ընդունելու մասին» N 51-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Ընդունել Անուշ Վազգենի Ավոյանի սեփականությունը հանդիսացող Անտառավան 3-րդ թաղամաս N 48/8 հասցեի 244,7 (երկու հարյուր քառասունչորս ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության հողամասի (կադաստրային ծածկագիր 08-001-0432-0037) նվիրատվությունը:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝ ապահովել նվիրատվության պայմանագրի կնքումը և հողամասի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:
3. Պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը իրականացնել Գյումրի համայնքի միջոցների հաշվին:
4. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ նվիրատվության ընդունում-հանձնումը իրականացնելուց հետո հողամասը վերցնել Գյումրի համայնքի հաշվեկշիռ:

2025-07-03 13:12:42 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

«03» հուլիսի 2025 **թվականի** N 1301-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Անդրանիկ Մադոյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար,
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Ռաֆայել Անանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի պահեստապետ,
գ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Լևոն Միրզախանյան – Գյումրի համայնքապետարանի աշխատակազմի ցանցային ադմինիստրատոր,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2025 թվականի N1300-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» հուլիսի 2025 թվականի N 1299-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ-ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴՄԻՏՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՎԵԼՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի ( այսուհետ՝ բաժին ) պետ-գլխավոր ֆինանսիստի ծառայողական պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել բաժնի գլխավոր մասնագետ Դմիտրի Գագիկի Մանվելյանին՝ 2025 թվականի հուլիսի 3-ից:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դմիտրի Գագիկի Մանվելյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<03>> ապրիլ 2025 թվականի N1298-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԳՅՈՒՄՐԻԻ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԻՆԵ ՌԱՖԻԿԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գյումրիի Ավետիք Իսահակյանի անվան հուշատուն - թանգարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարինե Ռաֆիկի Վիրաբյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողության տեսքով:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Ռաֆիկի Վիրաբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

<<03>> հուլիսի 2025 թվականի N 1297-Ա

## ԱԼՎԱՐԴ ՄԱՅԻՍԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ-ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի ( այսուհետ՝ բաժին ) պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Ալվարդ Մայիսի Հակոբյանին ազատել բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստի ծառայողական պարտականությունների կատարումից՝ 2025 թվականի հուլիսի 3-ից:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալվարդ Մայիսի Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

**«03» հուլիսի 2025 թվականի N 1296-Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N65/8 ՀԱՍՑԵԻ 11.92 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, 23.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՊԱՏԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՋԱՐԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ՑՈԼԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N65/8 հասցեի 11.92(տասնմեկ ամբողջ իննսուներկու) քառակուսի մետր մակերեսով հողամասով առևտրի և սպասարկման օբյեկտի պատը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N08062012-08-0075 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին, չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 23-ի N 26-Ա որոշումը և քաղաքացիներ Ջարե, Ցոլակ, Արմեն Գրիգորյանների դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2019 թվականին N12460 և 2023 թվականին N7545 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N65/8 հասցեի 11.92(տասնմեկ ամբողջ իննսուներկու) քառակուսի մետր մակերեսով հողամասը, մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով՝ տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 1914(հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 22815 (քսաներկու հազար ութ հարյուր տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Ջարե Գրիգորյանին, Ցոլակ Գրիգորյանին, Արմեն Գրիգորյանին:
2. Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N65/8 հասցեի 23.84(քսաներեք ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով, 364752( երեք հարյուր վաթսունչորս հազար յոթ հարյուր հիսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով առևտրի և սպասարկման օբյեկտի պատը՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Ջարե Գրիգորյանին, Ցոլակ Գրիգորյանին, Արմեն Գրիգորյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Ջարե Գրիգորյանը, Ցոլակ Գրիգորյանը, Արմեն Գրիգորյանը պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Ջարե Գրիգորյանի, Ցոլակ Գրիգորյանի, Արմեն Գրիգորյանի միջոցների հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

***«03» հուլիսի 2025 թվականի N1295-Ղ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Խ.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 19 ՀԱՍՑԵԻ 334.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 46.19 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (38.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 39.64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (32.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ, 20.19 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (16.3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ՄԱՌԱՆԸ ԵՎ 7.67 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԷԴԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ, ԳՈՀԱՐ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ, ԳՈՌ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ԱՐԱՔՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խ.Ավետիսյան փողոց N19 հասցեի 334.1(երեք հարյուր երեսունչորս ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N15052025-08-0012 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 23-ի N26-Ա որոշումը և քաղաքացի Էդիկ Վարդանյանի լիազորված անձ Արտյոմ Բարսեղյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականին N1614 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Խ.Ավետիսյան փողոց N19 հասցեի 334.1(երեք հարյուր երեսունչորս ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 2888(երկու հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 964881 (ինը հարյուր վաթսունչորս հազար ութ հարյուր ութսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Էդիկ Վարդանյանին, Գոհար Մխիթարյանին, Գոռ Հարությունյանին, Արաքսի Հարությունյանին:
2. Գյումրի քաղաքի Խ.Ավետիսյան փողոց N19 հասցեի հողամասում կառուցված 46.19(քառասունվեց ամբողջ տասնինը հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (38.7(երեսունութ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը՝ 231828(երկու հարյուր երեսունմեկ հազար ութ հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, 39.64(երեսունինը ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (32.0(երեսուներկու) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը՝ 66318(վաթսունվեց հազար երեք հարյուր տասնութ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, 20.19(քսան ամբողջ տասնինը հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (16.3(տասնվեց ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով մառանը և 7.67(յոթ ամբողջ վաթսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը ՝ 93220 (իննսուներեք հազար երկու հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Էդիկ Վարդանյանին, Գոհար Մխիթարյանին, Գոռ Հարությունյանին, Արաքսի Հարությունյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Էդիկ Վարդանյանը, Գոհար Մխիթարյանը, Գոռ Հարությունյանը, Արաքսի Հարությունյանը պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Էդիկ Վարդանյանի, Գոհար Մխիթարյանի, Գոռ Հարությունյանի, Արաքսի Հարությունյանի միջոցների հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» հուլիսի 2025 թվականի № 1294-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 32.64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԹՎՈՎ 6 (ՎԵՑ) ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0128-0001) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ինմասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդկետի 1-ին ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասում գտնվող 32.64 քառակուսի մետր մակերեսններով թվով 6 (վեց) հողամասերը (կադաստրային ծածկագիր 08-001-0128-0001) հասցեավորել համաձայն հավելվածի.

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025-07-03 12:59:34 GMT-4
Ստորագրված է ԷՍԻՄԻԴ-ի կողմից

2025 թ. ք. Գյումրի

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Գյումրի համայնքի ղեկավարի

2025թ. նոյեմբ. 03 - ի

N 1294-Ա որոշման

Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասում գտնվող 32.64 քառակուսի մետր մակերեսներով թվով 6 (վեց) հողամասերի (կադաստրային ծածկագիր 08-001-0128-0001) հասցեավորում

| № | Հողամասի մակերեսը (քառակուսի մետր) | Հողամասի հասցեն |
|---|---|---|
| 1. | 32.64 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 7/13 հողամաս |
| 2. | 32.64 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 7/14 հողամաս |
| 3. | 32.64 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 7/15 հողամաս |
| 4. | 32.64 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 7/16 հողամաս |
| 5. | 32.64 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 7/17 հողամաս |
| 6. | 32.64 | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 7/18 հողամաս |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«03» հուլիսի 2025 թվականի №1293-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՋԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑԻ 64/4 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 52,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 42,24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 12-ի №1079–Ա որոշումը, հողամասի ու շինությունների հատակագծերը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Ջիվանու փողոցի 64/4 հասցեի շինության հարևանությամբ գտնվող 52,8 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 42,24 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ջիվանու փողոց, 64/5 ավտոտնակ**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի